



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

--ապրիլ 2017 թվականի №-Ա
քաղ. Երևան

**«ԵՐԵՎԱՆ ԶԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
«ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՂՐՄԱՆ ՑԱՆՅԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով 2015 թվականի ապրիլի 8-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև կնքված վարկային համաձայնագիրը, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի և «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքված ծրագրի համաձայնագիրը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության միջև 2015 թվականի օգոստոսի 14-ին կնքված ենթավարկային պայմանագիրը, որոնց շրջանակներում ներգրավված «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրի իրականացմանն ուղղված 30 205 514 (երեսուն միլիոն երկու հարյուր հինգ հազար հինգ հարյուր տասնչորս) ԱՄՆ դոլար գումարի չափով ներդրումները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության կառավարության միջնորդությամբ ստացված արտոնյալ վարկային միջոցների հաշվին իրականացվող ներդրումներ և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրի իրականացմանն ուղղված ներդրումային ծրագրի շրջանակում ներգրավված միջոցների՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի կողմից 30 205 514 (երեսուն միլիոն երկու հարյուր հինգ հազար հինգ հարյուր տասնչորս) ԱՄՆ դոլար գումարի չափով տրամադրված վարկի և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը հնարավոր համաֆինանսավորվող գումարների վերադարձը կապահովվի

Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության սակագնի հաշվարկում դրանց սպասարկման և մարման ծախսերը ներառելու միջոցով՝ ըստ ենթավարկային պայմանագրում ամրագրված պայմանների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
--ապրիլի 2017թ.
Ժամը 16⁰⁰